ՋԱՒԱԽՔԸ ՅԵՏԽՈՐՀՐԴԱՅԻՆ ՎՐԱՍՏԱՆԻ ՎԱՐՉԱՏԱՐԱԾՔԱՅԻՆ ԲԱԺԱՆՄԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑՆԵՐՈՒՄ

ՎԱՀԷ ՍԱՐԳՍԵԱՆ
javakhk1913@gmail.com



ՄՈՒՏՔ

Յօդուածում ներկայացուում են յետխորհրդային Վրաստանի վարչատարածքային վերաբաժանումները եւ նոր տիպի երկրամասերի (նահանգների) ձեւաւորման գործընթացը, որն ուղղակիօրէն առնչւում է նաեւ երկրի հարաւային հայաբնակ մարզին՝ Ջաւախքին: Աշխատանքում մեծածաւալ փաստական նիւթի յենքի վրայ հանգամանօրէն քննարկուել է Վրաստանի հարաւում ձեւաւորուած Սամցխէ-Ջաւախքի նահանգի ստեղծման գործընթացը, ինչպէս նաեւ ներկայացուել է ջաւախահայ հասարակական-քաղաքական մտքի արձագանգը, որն առնչւում էր Վրաստանի ղեկավար Էդուարդ Շեւարդնաձէի համապատասխան հրամանագրին: Ելնելով այն իրողութիւնից, որ Ջաւախքի՝ նախկին խորհրդային հիմնական շրջանների յենքի վրայ ձեւաւորուած Սամցխէ-Ջաւախքի նահանգի ստեղծումը ներկայումս եւս մեծ ազդեցութիւն ունի ջաւախահայոց կեանքի մի շարք ոլորտների վրայ, յօդուածում համակողմանի քննութեան են առնուած նահանգի կազմաւորմանն առնչուող իրողութիւններ: Այս հողի վրայ քննւում են նաեւ հայկական պահանջատիրութեան մէջ առկայ հակասական մօտեցումները, իրարամերժ եւ յարափոփոխ պահանջները, որոնց պատճառով ստեղծուած քաոսային վիճակը չտուեց ցանկալի արդիւնք: Աւարտին անդրադարձ է կատարուած Ջաւախքի ներկայ իրավիճակին, որի շատ կողմեր սերտօրէն կապուած են դեռ 1994ին կատարուած նահանգային բաժան-

ման եւ դրա արդիւնքում կազմաւորուած Սամցխէ-Ջաւախքի նահանգի հետ:

ՎԱՐՉԱՏԱՐԱԾՔԱՅԻՆ ԲԱԺԱՆՄԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑԸ ՅԵՏԽՈՐՀՐԴԱՅԻՆ ՎՐԱՍՏԱՆՈՒՄ

1993-95՝ տեղի ունեցաւ Վրաստանի տարածքային բաժանման գործընթացը: Վրաստանը բաժանուեց 11 երկրամասերի (նահանգների).- Աբխազիա, Աջարիա, Գուրիա, Իմերեթի, Կախէթի, Մցխեթա-Մթիանեթի, Ռաջա-Լեչխումի եւ Քուեմո (ստորին) Սուանեթի, Սամեգրելոյ-Զեմոյ (վերին) Սուանեթի, Սամցխէ-Ջաւախեթի (Սամցխէ-Ջաւախք), Քուեմո (ստորին) Քարթլիի, Շիդա (ներքին) Քարթլիի: Եւ, քանի որ 24 Օգոստոսի 1995ին ընդունուած Վրաստանի սահմանադրութեան մէջ այդպէս էլ չլրացուեց երկրի կառուցուածքի (հետեւաբար նաեւ՝ վարչական բաժանումների մասին) գլուխը, նահանգային այս բաժանումները այդպէս էլ չստացան իրաւաբանական ձեւակերպումներ: Պատճառը հասկանալի էր՝ Վրաստանը դեռեւս չէր կարգաւորել իր յարաբերութիւնները փաստացի անջատուած Աբխազիայի, ինչպէս նաեւ Աջարիայի ու Հարաւային Օսեթիայի հետ:

Եթէ ներկայումս Վրաստանը, թէկուզ ձեւականօրէն, Աջարիային շնորհել է որոշ ինքնավարութիւն, իսկ Աբխազիային գոնէ հեռակայ կարգով տրուած է լայն ինքնավարութիւն, ապա այլ է Հարաւային Օսեթիայի պարագան. վերջինիս ճակատագիրը Վրաստանի կողմից առայժմ թղթի վրայ որոշուել է հետեւեալ կերպ. դեռ 1993–95՝ տեղի ունեցած երկրի վարչատարածքային բաժանումների հողի վրայ մասնատուեց նախկին Հարաւօսական Ինքնավար Մարզը, որի մեծ մասը հարաւային վրացական միքանի շրջանների՝ Խաշուրի, Քարելի, Գորիի եւ Կասպիի հետ մտցուեց Շիդա Քարթլի նորաստեղծ նահանգի մէջ, իսկ ինքնավար մարզի արեւելեան շրջանները մտցուեցին մէկ այլ՝ Մցխեթա-Մթիանեթի նահանգի մէջ: Հարաւային Օսեթիայի՝ Վրաստանին ենթարկուելու դէպքում վերջինիս սպասում է մասնատում, երբ թղթի վրայի այս որոշումը կը դառնայ իրականութիւն:

Վրաստանի նահանգային այս բաժանումը իր բովանդակութեամբ շատ նման էր Ցարական Ռուսաստանի ժամանակաշրջանում Արեւելեան Հայաստանում, ինչպէս նաեւ վրացաբնակ ու կովկասեան թաթարներով բնակեցուած մի շարք շրջաններում կատարուած վարչական բաժանումներին: Վրաստանի ղեկավարութեան կողմից եւս երկրի վարչական բաժանումը իրականացուեց ոչ թէ ազգաբաշխական յենքի վրայ, այլ ճիշտ հակառակը՝ փորձ արուեց հենց նշեալ գործընթացը գործիք ծառայեցնել երկրի մի շարք տարածքներում հոծ բնակուող մի շարք ժողովուրդների

վարչատարածքային իմաստով մասնատելու եւ, դրանով իսկ, արհեստականօրէն ստեղծուած նոր նահանգներում տուեալ էթնիկ տարրի (տեղաբնիկ ժողովուրդներ եւ ազգային փոքրամասնութիւններ) թուային տեսակարար կշիռը նուազեցնելու:

ՎԱՐՉԱՏԱՐԱԾՔԱՅԻՆ ՆՈՐ ՓՈՓՈԽՈՒԹԻՒՆՆԵՐԻ ԱԶԴԵՑՈՒԹԻՒՆՆԵՐԸ ՋԱՒԱԽՔԻ ՎՐԱՅ

Վրաստանի իշխանութիւնների իրականացրած նահանգային բաժանումը մեծապէս փոխեց իրավիճակը նաեւ Սամցխէ (Մեսխէթ, Մեսխունիք, Ախալցխայի Գաւառ) – Ջաւախք (Ախալքալաքի Գաւառ) - Ծալկա (Թռեղքի Գաւառ) (այս երեք շրջանները միասին այսուհետ կը կոչենք Ջաւախք) պատմական հայկական շրջաններում: Վրաստանի ղեկավար[1] Շեւարդնաձէի՝ 31 Յուլիս 1994ի թիւ 237 հրամանագրով ստեղծուեց նոր տիպի մի «երկրամաս», որի «անհրաժեշտութիւնը» բացատրւում էր՝ հաշուի առնելով այն «*...որ երկրում վերջին ժամանակներում ստեղծուած ծանր քաղաքական, տնտեսական, քրէածին իրադրութեան պատճառով Սամցխէ-Ջաւախեթիում՝ Ադիգէնի, Ասպինձայի, Ախալքալաքի, Ախալցիխէի, Բորժոմի եւ Նինոծմինդայի շրջաններում տեղ են գտել լուրջ դժուարութիւններ տնտեսութեան ոլորտում, ձգձգւում են նոր տնտեսավարման, սեփականաշնորհման անցնելու գործընթացները, չեն գնւում եւ իրացւում բնակչութեան արտադրած մթերքները, առկայ են դժուարութիւններ էներգակիրների բաշխման գործում, չեն կատարւում ընկերային-տնտեսական եւ այլ հարցերի վերաբերեալ իշխանութեան եւ կառավարման բարձրագոյն մարմինների որոշումները, թուլացել է դրանց կատարման վերահսկողութիւնը, ինչը բացասաբար է անդրադառնում բնակչութեան վիճակի, քաղաքացիների իրաւունքների եւ ազատութիւնների իրական երաշխիքների վրայ*»[2]:

Այդպիսով՝ նախկին խորհրդային վեց շրջաններից (Ադիգէնի, Ախալցխայի, Բորժոմի, Ասպինձայի, Ախալքալաքի եւ Նինոծմինդայի) բաղկացած Սամցխէ-Ջաւախք նահանգը, ստեղծուելով 31 Յուլիս 1994ին, գոյութիւն ունի մինչ օրս, եւ 1994ից առ այսօր Ջաւախքի բնակչութիւնը ապրում է նոր վարչատարածքային միաւորներում, որոնք, չնայած իրենց ոչ-իրաւական եւ այսպէս կոչուած «ժամանակաւոր» կարգավիճակին, Ջաւախքի հասարակական կեանքի վրայ թողել են մեծ ազդեցութիւն եւ շարունակում են ներգործել վերջինիս վրայ նաեւ ներկայումս:

Նշենք, որ հենց նահանգի ստեղծման պահից վերջինիս մէջ չներառուեց Ծալկայի՝ հիմնականում հայաբնակ շրջանը (շուրջ 13 հայաբնակ գիւղեր՝ մէկուկէս տասնեակ հազար հայ ազգաբնակչութեամբ, որը, տեղի յոյների մեծ թափով հեռանալու պայմաններում շուտով կազմելու էր շրջանի բնակչութեան բացարձակ մեծամասնութիւնը): Այն միացուեց Քուեմո

Քարթլի նորաստեղծ եւ հիմնականում ադրբեջանաբնակ (թաթարաբնակ) նահանգին: Այս քայլը նպատակ ունէր մասնատել Ջաւախքի հայութեանը, թուլացնել վերջինիս՝ բացառելով այնտեղ հայկական գործօնի ձեւաւորումը, միաժամանակ՝ դրանով մեծապէս փոխւում էր Ջաւախքի բնակչութեան ժողովրդագրական պատկերը:

Նահանգի ստեղծումով մեծապէս փոփոխութեան ենթարկուեցին նաեւ Ջաւախքի վարչական եւ այլ հասարակական-պետական հիմնարկներն ու տարբեր հաստատութիւնները՝ ինչպէս կառուցուածքային, այնպէս էլ՝ աշխարհագրական վայրի գտնուելու իմաստով, որոնք իրենց այս կամ այն ազդեցութիւնն են թողել եւ թողնում Ջաւախքի վրայ:

Նկատի ունենալով, որ այդ վարչական հաստատութիւնները մեծ դեր ունեն Ջաւախքի՝ որպէս մէկ ինքնուրոյն վարչատարածքային կամ ինքնավար միաւոր ձեւաւորուելու գործընթացում, ապա կարեւոր է մանրամասն քննութեան առնել վերջիններիս հետ կապուած առկայ խնդիրները:

ՆՈՐԱՆԿԱԽ ՎՐԱՍՏԱՆԻ ՎԱՐՉԱՏԱՐԱԾՔԱՅԻՆ ԲԱԺԱՆՈՒՄՆԵՐԸ ԵՒ ՋԱՒԱԽԱՀԱՅ ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ-ՔԱՂԱՔԱԿԱՆ ՄԻՏՔԸ

Դեռ 1990ականներից՝ Ջաւախքի հասարակական-քաղաքական կազմակերպութիւններն ու առանձին անհատներ հանդէս են եկել Վրաստանի վարչատարածքային խնդիրներին առնչուող տարաբնոյթ դիրքորոշումներով եւ համապատասխան արձագանգներով:

Ջաւախքում առկայ եւ գործընթացների մէջ դերակատար հասարակական ուժը, որը յաւակնում էր ստանձնելու նաեւ քաղաքական գործառոյթներ՝ «Ջաւախք Ժողովրդական Շարժում»ն (ՋԺՇ) էր, որը տարբեր շրջաններում համախմբում էր տարբեր միութիւնների ու հասարակական կազմակերպութիւնների՝ վերածուելով կառավարող ուժի:

Սակայն 1990ականների կէսերին արդէն ՋԺՇն ոչ թէ գաղափարական համախմբուածութեամբ, այլ այդ ընթացքում փոխադարձ անձնական շահերով պայմանաւորուած մի կառոյց էր, որի՝ երրորդ (10 Ապրիլ 1993) եւ չորրորդ (1995)[3] խորհրդաժողովներում խիստ զգացուեց նրա թուլութիւնը եւ նրա առաջնորդների պառակտուածութիւնը՝ թէ՛ գաղափարական, թէ՛ կազմակերպական գետնի վրայ: Շատ գործիչներ թողեցին ՋԺՇն՝ չտեսնելով այնտեղ հեռանկար իրենց յետագայ քաղաքական ասպարէզի համար եւ ընտրեցին այլ ճանապարհներ՝ մեկնում Ռուսաստան եւ այլ վայրեր, մասնաւոր գործարարութիւն, այլ պաշտօնների զբաղեցում եւն: Այսպիսի մարդկանց մէջ քիչ չէին նաեւ մտաւոր բարձր կարողութիւններ ունեցող գործիչներ, որոնք այնքան անհրաժեշտ էին Ջաւախքի յետագայ ճակատագրի որոշման գործում: Աւելին, ՋԺՇն անընդհատ բարձրացնելով ընկերային-տնտեսական, Վրաստանի կեդրոնական իշխանութեան կողմից

վարուող հակահայ քաղաքականութեան, ծանր ուժանիւթի ճգնաժամին (Ջաւախքում էլեկտրական հոսանքի մատակարարում գրեթէ տեղի չէր ունենում) վերաբերող բազմապիսի հարցեր, դրանց շատ անգամ տալիս էր յուզական բնոյթ, եւ ոչ թէ մշակուած որոշակի պահանջների տեսք: ՋԺՇի մնացեալ առաջնորդներն իրենց ծրագրերում եւ առաջ քաշուող ինքնավարութեան պահանջներում[4] որոշակի պատկերացում անգամ չունէին Ջաւախքի տարածքային ընդգրկուածութեան մասին[5]:

Նման իրավիճակում, երբ Վրաստանի կողմից դէպի Ջաւախք էին ուղղւում տեղի հայութեան շահերին հարուածող նորանոր օրէնքներ, տեղում չկար դիմակայող ուժ: Դա չէին կարող անել նաեւ տարածաշրջանում առկայ փոքր ու մեծ հասարակական կազմակերպութիւնները՝ «Դեմոկրատների Միութիւն»ը, «Սուրբ Խաչ»ը, «Կանաչների Միութիւն»ը, ինչպէս նաեւ «Օդա», «Ձայն Ջաւախքի», «Արշալոյս», «Ժողովրդավարական Միութիւն», «Վրաստանի Քաղաքացիների Համերաշխութեան Միութիւն» կազմակերպութիւնները, որոնք գործում էին Ջաւախքում[6]:

Նման պայմաններում ջաւախքցիների ցանկացած նախաձեռնութիւն ունենում էր խիստ մշուշոտ ապագայ: Դա դրսեւորուեց նաեւ Ջաւախքում 1995 Յուլիսին կազմակերպուած ստորագրահաւաքի ժամանակ, երբ դեռեւս չէր ընդունուել երկրի հիմնական օրէնքը՝ սահմանադրութիւնը: Ստորագրահաւաքն իրականում Ջաւախքին ինքնավարութիւն տալու Վրաստանին ներկայացուող պահանջի հիմնաւորում չէր: Այն կրում էր աւելի շուտ հանրային հարցման բնոյթ, որով փորձ էր արւում իմանալ ժողովրդի կարծիքը՝ ապագայ դաշնային Վրաստանի կազմում Ջաւախքի՝ որպէս քաղաքականապէս ինքնակառավարուող վարչական միաւոր տեսնելու խնդրում (սահմանադրական իրաւունքով)[7]: Սակայն, հաւաքուած շուրջ 13,000 ստորագրութիւնները Ջաւախքի կարգավիճակի հարցում ոչինչ չպիտի փոխէին Վրաստանի սահմանադրութեան մէջ[8]: Բարձրաձայնելով կենսական հարցեր (տարածաշրջանի ժողովրդագրական կազմի փոփոխութիւն՝ արհեստական ձեւով, տնտեսական զարգացման խոչընդոտ, Ջաւախքի վարչական ամբողջ կառոյցի տեղափոխում Ախալցխա, վարչական շատ հիմնարկների լուծարում կամ դարձեալ տեղափոխում Ախալցխա, բնակչութեան եւ վարչական կառավարող օղակների միջեւ կապի արհեստականօրէն խիստ վատացում)[9], որոնք ստեղծուել էին Շեւարդնաձէի թիւ 237 հրամանագիրը ստորագրելուց յետոյ, խստագոյնս քննադատելով նշեալ փոփոխութիւնը եւ կոչ անելով չենթարկուել նահանգապետին[10]՝ ՋԺՇի ներկայացուցիչները եւ Ախալքալաքի ու Բոգդանովկայի շրջանների գործիչների հաւաքի մասնակիցները չունէին ինքնավարութեան վերաբերեալ կամ Շեւարդնաձէի կազմատրած նահանգին հակադրող այլ մոդէլ: Օրինակ, որ 10 Օգոստոսի 1994ին, Բոգդանովկայում հրա-

փրուել էր «Օդա» բարեգործական ընկերութեան ընդլայնուած նիստ, որտեղ, քննարկելով թիւ 237 հրամանագիրը, խստօրէն դատապարտուեց Շեւարդնաձէի այս որոշումը եւ ընդունուեց նրան ուղղուած դիմում[11]: Յստակեցուած չէր նաեւ Ախալցխայի կարգավիճակի հարցը: Հայկական Մեսխունիք գաւառն իր ներկայ երեք՝ Ադիգէնի, Ախալցխայի եւ Ասպինձայի (մասամբ) շրջաններով, յաճախ մտցւում էին «Ջաւախք» հասկացութեան տակ եւ պահանջում էր նրանց տալ ինքնավարութիւն: Իսկ այսպիսի վարչատարածքը, եթէ հաշուի չառնենք Բորժոմի եւ Ծալկայի շրջանների պարագան, հիմնականում համապատասխանում էր Շեւարդնաձէի ստեղծած նահանգին: Ստեղծւում էր այնպիսի տպաւորութիւն, որ չընդունելով վրացականը, ջաւախքեցիները պահանջում էին իրենց համար ընդունելի չափորոշիչներով վարչատարածքային տարբերակ, որն իրականում նոյնն էր, ինչ վրացականը. երկրամասում մշակուած հայեցակարգի բացակայութեան պայմաններում՝ իշխանութիւնների կողմից Ջաւախքի առաջնորդների պահանջները մերժելը դառնում էր դիւրին խնդիր:

ՉԿԱՅԱՑԱԾ ՀԱՆՐԱՔՈՒԷՆ

1997ին Ջաւախքում լրջօրէն սկիզբ առաւ «հանրաքուէ» կոչուող մի գործընթաց, որը ճակատագրական նշանակութիւն էր ունենալու տարածաշրջանի յետագայ զարգացման համար: ՋԺՇի կողմից սկսուեց բնակչութեան շրջանում ստորագրութիւններ հաւաքելու գործընթացը: Այդ առթիւ նաեւ նամակ յղուեց նախագահ Շեւարդնաձէի եւ խորհրդարանի խօսնակ Զուրաբ Ժուանիայի անուններով[12], որտեղ մանրամասն հիմնաւորւում էր Ջաւախքը Ախալցխայի վարչական տնօրինութեան տակ դնելու բոլոր բացասական հետեւանքները, նշւում էր նաեւ Ախալքալաքը, Նինոծմինդան եւ Ասպինձան դուրս բերելու Ախալցխայի ենթակայութիւնից եւ մէկ տնտեսական գօտու մէջ ներառելու նպատակայարմարութիւնը: Պահանջւում էր նաեւ այդ երեք շրջաններում մտցնել վարչական կառավարման յատուկ ձեւ: «Այդ նպատակով, վերոնշեալի հաստատման համար, համաձայն Վրաստանի սահմանադրութեան 67րդ յօդուածի Ա. կէտի (...ոչ-քիչ, քան 30 հազար ընտրողներն իրաւունք ունեն օրէնսդրական նախաձեռնութեան)՝ Ջաւախքի Հասարակական-Քաղաքական Կազմակերպութիւնների *Կոորդինացիոն* Խորհրդի (ՋՀՔԿԿԽ) անդամները (որի մէջ, բացի «Ջաւախք» Ժողովրդական Շարժումից, մտնում էին նաեւ ինչպէս Ախալքալաքում, այնպէս էլ Բոգդանովկայում գործող «Արշալոյս», «Զարթօնք», «Վետերանների Միութիւն», «Ժողովրդավարների Միութիւն», տեղական հասարակական քաղաքական կազմաւորումները), այդ շրջանների բնակչութեան նախաձեռնութեամբ, հաւաքում են ստորագրութիւններ[13]: Ախալցխայի վարչական ենթակայութիւնից Ջաւախքը դուրս բերելու վերաբերեալ

շուրջ 15,000 ստորագրութիւն էր հաւաքուել դեռ 1995 Յունիսին, որ ներկայացուել էր Շեւարդնաձէին՝ նրա եւ նախագահ Լեւոն Տէր Պետրոսեանի 1996ին Ջաւախքում հանդիպման ժամանակ, սակայն վերջինս «այդ ստորագրութիւնների վրայ անգամ չնայեց»»[14]: Իսկ 1997 Յուլիս-Օգոստոսին հաւաքուող ստորագրութիւնների ռուսերէն թերթիկն ունէր հետեւեալ բովանդակութիւնը. «Յարգելի ջաւախքեցիներ, Ձեր նախաձեռնութեամբ ՋՀՔԿԿԽն, համաձայն Վրաստանի սահմանադրութեան 67րդ յօդուածի առաջին կէտի (...30,000ից ոչ-քիչ ընտրողներն իրաւունք ունեն հանդէս գալու օրէնսդրական նախաձեռնութեամբ), նախաձեռնում է ստորագրահաւաք՝ երկրի խորհրդարանում հետեւեալ հարցերը քննարկելու համար.-

1՝ Ոչ սահմանադրական Սամցխէ-Ջաւախք երկրամասի կազմաւորման գործընթացի դադարեցում.

2՝ Երկրի պետական-տարածքային կառուցուածքի մասին սահմանադրութեան գլխի ընդունման ժամանակ, Ջաւախքին տալ համապատասխան վարչատարածքային միաւորի կարգավիճակ՝ Վրաստանի սահմանադրութեան շրջաններում»: Հաւաքուած բազմահազար ստորագրութիւններին հետեւելու էր հանրաքուէն: «Ջաւախք» ժողովրդական շարժման շուրջ համախմբուած ՋՀՔԿԿԽն մեծ աշխուժութեամբ էր նախապատրաստում 1998 Փետրուարին անցկացուելիք համընդհանուր հանրաքուէին: Այդ առթիւ դիմում յղուեց նաեւ Հայաստանի եւ Վրաստանի խորհրդարանական պատուիրակութիւններին[15], որում մանրամասն նշում էին Ջաւախքի առջեւ ծառացած ընկերային-տնտեսական, մշակութա-լուսաւորչական եւ քաղաքական բնոյթի խնդիրները, որոնք գոյութիւն են ունեցել տասնամեակներ շարունակ:

Ըստ դիմումի՝ ստեղծուած իրավիճակից դուրս գալու միակ միջոցը Ջաւախքի բնակչութիւնը, տեսնում էր հետեւեալ որոշակի հարցի մասին հանրաքուէի անցկացման մէջ. «համաձա՞յն էք Դուք, որ Ջաւախքի տարածաշրջանը Վրաստանի կազմում ունենայ վարչատարածքային միաւոր»[16]:

ՋԺՇի կողմից 1997 Փետրուարին *Ջաւախք* թերթի թիւ 1 (18)ում տպագրուեց նաեւ մի մեծ .կոչ՝ ուղղուած ջաւախքցիներին[17]: Կոչում նոյնպէս բարձրացում էին Ջաւախքում առկայ բոլոր հիմնախնդիրները, մանրամասն քննադատութեան էր ենթարկւում Վրաստանի կողմից վարուող քաղաքականութիւնը, քննադատւում էին նաեւ շրջանի ղեկավարները[18]: Իրօք, Ախալքալաքի շրջանի ղեկավարութիւնը բացայայտօրէն դէմ էր եւ ամէն կերպ խոչընդոտում էր հանրաքուէի անցկացմանը: Դա է վկայում այն փաստը, որ 5 Փետրուար 1997ին, գիւղական վարչութիւնների, *կոլտնտեսութիւնների* նախագահների եւ *սովխոզների* տնօրէնների ընդլայնուած նիստի ժամանակ, որտեղ լայնօրէն քննարկման էր առնուել ՋՀՔԿԿԽի առաջ քաշած հանրաքուէի հարցը, Ախալքալաքի շրջանային վարչութեան

նախագահ Ս. Դարբինեանը կտրականապէս արգելել էր (ընդհուպ մինչեւ պաշտօնից ազատելու սպառնալիքով) մասնակցելու այդ ընտրութիւններին եւ թոյլ չէր տուել վաւերացնելու նիստի արձանագրութիւնը: ՋՀՔԿԿԽի անդամների կողմից այս առթիւ բաց նամակ է հրապարակւում՝ ուղղուած Դարբինեանին եւ նշւում, որ նման ձեւով շարունակելու դէպքում վերջինիս նկատմամբ կը կիրառուեն համապատասխան միջոցներ[19]:

Այդուհանդերձ, չնայած բազմաթիւ խոչընդոտներին, ՋՀՔԿԿԽն Ջաւախքի հարցի լուծումը տեսնում էր հանրաքուէ անցկացնելու մէջ. «*մեր կատարած բոլոր քայլերը ցանկալի արդիւնքի դեռ չեն հասցրել, դրա համար էլ ՋՀՔԿԿԽն անում է յաջորդ վճռական քայլը՝ Ջաւախքում համաժողովրդական հանրաքուէ-ռեֆերենդում անցկացնելու քայլն է*»[20]: Ջաւախք պարբերականում հրապարակուած կոչով հանրաքուէի կազմակերպիչները դիմում էին Ջաւախքի ողջ բնակչութեանը, երկու շրջանների վարչութիւնների նախագահներին, ձեռնարկութիւնների տնօրէններին, գիւղական վարչութիւններին, բուժաշխատողներին, ուսուցիչներին. «հրաժարուել բոլոր տեսակի կրաւորականութիւնից ու անտարբերութիւնից, տեղերում եռանդուն կերպով մասնակցել հանրաքուէի անցկացման նախապատրաստական աշխատանքներին ու հանրաքուէի օրը «Վրաստանի կազմում Ջաւախքի առանձին քաղաքական ինքնակառավարման միաւոր» ստեղծելուն ասել՝ «այո»[21]: ՋՀՔԿԿԽի կողմից 1997 Ապրիլին մշակուել էր նաեւ Ջաւախքի հիմնահարցի լուծման մարտավարութեան մի նախագիծ[22], որտեղ Ջաւախքի հիմնահարցի լուծման պայքարի քաղաքակիրթ, քաղաքական հանգրուանային ձեւերի մի շարք կէտերից ուշագրաւ էին հետեւեալները.-

«...*գ) Վրաստանի կազմում Ջաւախքի վարչատարածքային ազգային միաւորի ստեղծում, դ) Վրաստանի կազմում Ջաւախքի ինքնավարութեան ձեռքբերումը՝ որպէս դաշնային միաւոր (եթէ Վրաստանը գնալու է դաշնային պետութիւն դառնալու ճանապարհով), է) Ջաւախքի հիմնահարցի միջազգայնացում՝ որպէս օժանդակ միջոց*»[23]: Իսկ այս ամէնին, ինչպէս նաեւ մի շարք այլ հիմնախնդիրների լուծմանն ուղղուելիք միջոցառումների համապարփակ ազգային ծրագրային դրոյթներից հետաքրքիր էր հետեւեալ կէտը.-

«... *է) երկրամասում Վրաստանի ազդեցութեան լծակների թուլացում եւ Ախալցխայի, Ծալկայի, Բորժոմի եւ Ասպինձայի շրջանների հայութեան ուժեղացում, որոնք Ջաւախքի էթնիկական պատնէշն են հանդիսանում*»[24]:

Այնուամենայնիւ, այսքանից յետոյ, Ջաւախքում հանրաքուէ չանցկացուեց...: Ի՞նչն էր պատճառը: «Ջաւախք» ժողովրդական շարժման նախագահ Ստեփան Յակոբեանը այդ առթիւ տալիս է հետեւեալ պատասխանը. «*պատրաստ էին քուէաթերթիկները, կազմել էինք կոորդինացիոն խոր-*

հուրդ (այդ խորհրդի մէջ էին մտնում այդ շրջանում Ջաւախքի քաղաքական գործիչներից՝ Դաւիթ Վեքիլեանը, Դաւիթ Ռստակեանը, Սամուէլ Պետրոսեանը, Ստեփան Յակոբեանը, Տիգրան Կարախանեանը, Նորիկ Կարապետեանը, Մերուժան Աբրահամեանը, Խաչատուր Այվազեանը, Ռուբէն Սահակեանը, Պետրոս Ստամբոլցեանը, Ժորա Ալվարեանը - Վ. Ս.)[25]: *Դիմեցինք Վրաստանի կառավարութեանը՝ թոյլատրել անցկացնելու հանրաքուէ: Պատասխան չեղաւ: ...հանրաքուէ չանցկացուեց, բայց ընդունուեց եւ տեղական «Ջաւախք» թերթում հրապարակուեց «Ջաւախքի ինքնավար հանրապետութեան» Սահմանադրութեան նախագիծը: Դա սոսկ առանձին մարդկանց մտայղացումն էր, կարծիքը»*[26]: Աւելացնենք սակայն, որ այդ սահմանադրութիւնն էլ *Ջաւախք* թերթում տպագրուել էր բաւականին ուշ՝ 1998 օգոստոսեան համարներից մէկում[27]:

Անհասկանալի է որ.-

1) Եթէ Ջաւախքի բնակչութիւնը մինչ այդ - ինչպէս տեսանք - իր ստորագրութիւններով կողմ էր արտայայտուել հանրաքուէին, իսկ Վրաստանի սահմանադրութեան 67րդ յօդուածի առաջին կէտով նրան իրաւունք էր վերապահւում կայացնելու օրէնսդրական նախաձեռնութիւններ՝ 30,000ից ոչ-քիչ բնակչութիւն լինելու դէպքում, իսկ Ջաւախքի (Ախալքալաքի եւ Նինոծմինդայի շրջանների) բնակչութիւնը այդ թուականին, ըստ պաշտօնական տուեալների, շուրջ 97,511 էր[28], ապա ո՞րն էր Թբիլիսիին դիմելու իմաստը: Կամ միթէ՞ պարզ չէր, որ Թբիլիսին, այսպէս թէ այնպէս թոյլ չի տալու այդ հանրաքուէն. դա առնուազն պարզ պէտք է լինէր Թբիլիսիի կողմից նշանակուած շրջանային վարչութեան նախագահների՝ այս խնդրի վերաբերեալ ունեցած կարծր, անզիջող դիրքորոշումներից:
2) Եթէ ՋՀՔԿԿԽն պէտք է հանրաքուէն անցկացնէր Թբիլիսիի թոյլատրութեամբ, իսկ այդ ընթացքում չունենալով այն, ինչու՞ էր այդքան նախապատրաստուել, նախապատրաստել նաեւ ժողովրդին, համընդհանուր աղմուկ բարձրացրել, գրգռել իր դէմ վրացական մամուլին:

Իհարկէ, սրանք այս գործընթացի կասեցման պատճառների փոքր մասն են միայն: Իրականում, ամենամեծ պատճառներից մէկը ՋՀՔԿԿԽի, ինչպէս նաեւ ՋԺՇ անդամների՝ այս հարցի շուրջ առաջացած տարակարծութիւններն էին, որոնց պատճառով շուտով ՋՀՔԿԿԽն ու նրա կորիզը կազմող ՋԺՇն անհամեմատ թուլացան եւ գրեթէ դադարեցին գոյութիւնից: Ջաւախքի ճակատագրի որոշման կարեւոր դերը ստանձնած ՋՀՔԿԿԽի եւ ՋԺՇ ղեկավար անդամների մօտ շեշտակիօրէն զգացւում էր միասնաբար մշակուած հայեցակարգի, քաղաքական ուղու բացակայութիւնը: Միւս կարեւոր պատճառներից էին դարձեալ, Ջաւախքի ինքնավարութիւնն ընդգրկող աշխարհագրական սահմանների, ինչպէս նաեւ քա-

ղաքական շրջանակների ոչ-ճիշտ պատկերացումները, հետեւաբար նաեւ՝ այստեղից բխող՝ Վրաստանին ներկայացուող պահանջների՝ միմեանց խիստ հակասական լինելը:

Եթէ հանրաքուէից առաջ ստորագրահաւաքի ժամանակ ՋՀՔԿԿԽի անդամների՝ Շեւարդնաձէին եւ Ժուանիային ուղղուած դիմումում «*նպատակայարմար էր համարում նախագահի անձնական լիազօր ներկայացուցչի պաշտօն մտցնել Ախալքալաքի, Նինոծմինդայի եւ Ասպինձայի շրջանների վրայ՝ համապատասխանաբար նոր կազմակերպչական-տնտեսական համակարգի տարածքային վարչութեան եւ տնտեսավարման մշակումով*»[29], ապա համարեա բոլոր տեղերում պահանջների մէջ միայն նշւում է «Ջաւախք» տարածաշրջանի մասին, որը պէտք է դուրս բերուէր Ախալցխայի վարչական կառավարման համակարգից, այսինքն, այս պահանջներից դուրս էր մնում Ասպինձայի շրջանը: Դա է վկայում նաեւ Ջաւախքի հասարակական-քաղաքական կազմակերպութիւնների ՋՀՔԿԿԽի՝ 1997 Ապրիլին մշակած վերոնշեալ՝ Ջաւախքի հիմնահարցի լուծման մարտավարութեան նախագիծը, որով նախատեսուող միջոցառումների ծրագրային «է» կէտով Ջաւախքի էթնիկական պատնէշ են համարւում Ախալցխայի, Ծալկայի, Բորժոմի եւ Ասպինձայի շրջանները, որոնց շրջանում «*պէտք էր թուլացնել Վրաստանի ազդեցութեան լծակները եւ ուժեղացնել հայերին*»[30]: Աւելին, հանրաքուէն նոյնպէս նախատեսուած էր անցկացնել միայն Ջաւախքում (Ախալքալաքի եւ Նինոծմինդայի շրջաններում): Այս բոլորից բացի, խիստ անորոշ էր նաեւ նախատեսուող հանրաքուէի ժամանակ դրուած պահանջը. «*Համաձա՞յն էք, որպէսզի Վրաստանի սահմանադրութեան շրջանակներում Ջաւախքի տարածքը՝ Ախալքալաք կենտրոնով, ունենայ իր վարչատերիտորիալ միաւորը միասնական Վրաստանի կազմում - ԱՅՈ, ՈՉ*»[31]:

Կարելի է եզրակացնել, որ հանրաքուէն վերաբերում էր ոչ թէ Ջաւախքի ինքնավարութեան կարգավիճակ ստանալուն, այլ, փաստօրէն, պայքարը գնում էր Ջաւախքի մի հատուածը Ախալցխայի վարչական ինքնակառավարման ենթակայութիւնից դուրս բերելու համար, իսկ թէ ինչպիսի՞ կարգավիճակով՝ դա չէր նշւում:

«Ախալքալաք *կենտրոնով վարչատերիտորիալ միաւոր*» ձեւակերպումը խիստ անորոշ հասկացութիւն էր եւ դրա տակ անհնար էր ինչ-որ բան հասկանալ ինքնավարութեան մասին: Իսկ եթէ նոյնիսկ Վրաստանը «հասկանար» հայերի այս պահանջը եւ Ջաւախքը Ախալցխայի ենթակայութիւնից դուրս բերելուց բացի, նրան տար նաեւ ինքնավարութիւն, ապա մեր կարծիքով խիստ անարդարացի կը լինէր Ախալցխայի՝ պաշտօնական տուեալներով շուրջ 43% (23,644 մարդ, այն դէպքում, երբ վրացիների թիւը աւելի էր ընդամէնը 2044ով (25,688 մարդ)[32] հայութիւն կազմող եւ Ծալ-

կայի՝ հայերի բացարձակ մեծամասնութեամբ բնակեցուած շրջանները թողնել, մեղմ ասած, «բախտի քմահաճոյքին»:

Արդէն թուլացած ՋԺՇն, նորից «վերակենդանանալու» ճիգեր գործադրելով, 1998 Օգոստոսին (հանրաքուէի տապալումից շուրջ կէս տարի անց), *Ջաւախք* թերթում շարունակում է կոչ անել ժողովրդին՝ պայքարի ելնել՝ դուրս գալու Ախալցխայի ենթակայութիւնից[33], միաժամանակ վերոյիշեալ թերթի նոյն ամսում լոյս տեսած հերթական համարում տպագրւում է «Ջաւախքի Ինքնավար Հանրապետութեան Ապագայ Սահմանադրութեան Հիմնադրոյթները» վերտառութեամբ մի ծաւալուն յօդուած, որտեղ Ջաւախքի ապագայ ինքնավար հանրապետութիւնն «*ընգգրկում էր իր մէջ Ախալքալաքի, Նինոծմինդայի, Ասպինձայի, Ախալցխայի եւ Ծալկայի շրջանները՝ իրենց այժմեան սահմաններով, ինչպէս նաեւ Բորժոմի շրջանին բռնակցուած Չխարոլա, Մոլիթ, Ղզլքիլիսա (Տաբաձղուրի) հայկական գիւղերը*»[34]:

Բնականաբար, այստեղից հարց է առաջանում. եթէ ՋՀՔԿԿԽի անդամների կողմից նախատեսւում էր Ջաւախքի ինքնավար հանրապետութիւնն ստեղծել նշուած սահմանադրութեան Ա. կէտով նախատեսուող (Ախալքալաքի, Նինոծմինդայի, Ասպինձայի, Ախալցխայի, Ծալկայի շրջաններ եւ Բորժոմի շրջանի հարաւային հայկական գիւղեր) սահմաններում, ապա էլ ինչու՞ էին նրանք ձգտում Ջաւախքի դուրս բերումը Ախալցխայի ենթակայութիւնից: Նշենք այն տարբերութիւնը, որ կար Սամցխէ-Ջաւախք նահանգի եւ այն ինքնավար հանրապետութեան միջեւ, որը ուզում էին ստեղծել ՋՀՔԿԿԽի ներկայացուցիչները.- 1) նահանգում կար Բորժոմի շրջանը, ինքնավար հանրապետութեան սահմանադրութեան մէջ կային միայն նրա հարաւային հայկական գիւղերը, 2) նահանգում չկայ Ծալկայի շրջանը, սահմանադրութեան մէջ այն մտնում էր որպէս ինքնավար հանրապետութեան մասնիկ: 3) նահանգում կայ Ադիգէնի՝ Աջարիային սահմանակից շրջանը, որը չէր նախատեսւում մտցնել ինքնավար հանրապետութեան մէջ: 4) Միւս էական տարբերութիւնն այն էր, որ նահանգում՝ նահանգային կենտրոնը Ախալցխա քաղաքն է, սահմանադրութեամբ նախատեսւում էր. «Ջաւախքի վարչական կենտրոնը (մայրաքաղաքը) Ախալքալաք քաղաքն է» (սահմանադրութեան 2րդ կէտ)[35]: 5) եթէ այժմ նահանգի անունը Սամցխէ-Ջաւախեթի է, ապա սահմանադրութիւնն առաջարկում էր «Ջաւախք» անունը (Ջաւախքի ինքնավար հանրապետութիւն, կրճատ՝ Ջաւախք (սահմանադրութեան 4րդ կէտ)[36]:

Ինչպէս տեսնում ենք, կառուցուածքային առումով այնքան էլ մեծ չէր տարբերութիւնը՝ ՋԺՇի առաջ քաշած սահմանադրութեամբ նախատեսուող եւ Վրաստանի՝ «31 Յուլիսի 1994ից առաջարկուող» տարածքային-վարչական միաւորների միջեւ (եթէ հաշուի չառնենք այնտեղի օրէնսդրու-

թեան, կառավարման ձեւերի եւն.ի միջեւ եղած տարբերութիւնները), հետեւաբար, աւելի ճիշտ չէ՞ր լինի, որ վերջիններս ի սկզբանէ պայքարէին կենտրոնը Ախալցխայից Ախալքալաք բերելու, վարչատարածքային եւ օրէնսդրական-կառավարական տարբերութիւնները վերացնելու ուղղութեամբ: Այսինքն, հասնէին նահանգային ինքնավարութեան, ինչը նախատեսւում էր իրենց աւելի ուշ առաջ քաշած սահմանադրութեան մէջ, եւ ոչ թէ տարիներ շարունակ պայքար ծաւալուէր մեկուսանալու եւ օտարուելու Ախալցխայի շրջանից:

Այսպիսով, մշակուած, որոշակի ու յստակ պահանջների բացակայութեան պայմաններում Վրաստանի կենտրոնական իշխանութեանն այլ ելք չէր մնում, քան հաշուի չնստել այս ամէնի հետ եւ դրա փոխարէն, հայութեան աչքերին «թոզ փչող» ծրագրերի կիսատ-պռատ իրականացման միջոցով, փորձէր «լուծուած» համարել այստեղի բազմապիսի հիմնախնդիրները:

ՎՐԱՍՏԱՆԻ ԻՇԽԱՆՈՒԹԻՒՆՆԵՐԻՆ ՆԵՐԿԱՅԱՑՈՒՈՂ ՊԱՀԱՆՋՆԵՐԻ ԲԻՒՐԵՂԱՑՈՒՄ

Ջաւախքի նահանգային եւ որպէս ինքնավար տարածաշրջան հանդէս գալու խնդիրներին յետագայում անդրադարձաւ Սամցխէ-Ջաւախքի եւ Քուեմօ Քարթլիի Հայկական Հասարակական Կազմակերպութիւնների Խորհուրդը (ստեղծուած՝ 2003ին), որն իր «ինտեգրում, բայց ոչ ձուլում» նախաձեռնութեան երեք համաժողովներից[37] երրորդը (24 Սեպտեմբեր 2005) ամբողջովին նուիրել էր Վրաստանի պետական կառուցուածքում Ջաւախքի կարգավիճակի խնդրին: Համաժողովը պահանջում էր Վրաստանից մի շարք քայլերի իրագործում, մասնաւորաբար.-

1) Վրաստանի պետական կառուցուածքին տալ դաշնային կառուցուածք, որը բաղկացած լինի տարածքային միաւորներից (entity) կենտրոնական իշխանութիւններից.
2) Վրաստանի պետական դաշնային կառոյցում կենտրոնական իշխանութիւններին վերապահել Վրաստանի սահմանադրութեան յօդուած 3ի (այ) կէտի ենթակէտերով սահմանուած բոլոր լիազօրութիւնները[38].
3) Տարածքային միաւորների կազմում՝ հիմք ընդունել Վրաստանի բաղկացուցիչ ազգութիւնների էթնիկական ինքնութեան պահպանման եւ զարգացման կարիքներն ու հնարաւորութիւնները.
4) Սամցխէ-Ջաւախքի՝ իր ներկայ սահմաններով եւ Քուեմօ Քարթլիի՝ սահմանակից առաւելաբար հայաբնակ բնակավայրերով վերածումը Վրաստանի պետական դաշնային կառոյցի ինքնավարութեան օղակներից մէկի՝ ինքնակառավարման լայն լիազօրութիւններով, նե-

ռառեալ բնակչութեան կողմից ազատ ընտրութիւններով ինքնակառավարման բոլոր մարմինների ընտրութեան իրաւունքով[39]:

Նոյն խորհուրդը 2008ին վրաց-օսական պատերազմից անմիջապէս յետոյ հանդէս եկաւ Սամցխէ-Ջաւախքը իր ներկայ սահմաններով եւ Քուեմօ-Քարթլիի սահմանակից, առաւելաբար հայաբնակ բնակավայրերով Վրաստանի պետական դաշնային կառոյցի ինքնավար օղակներից մէկի վերածելու մասին պահանջով[40]:

Դատելով վերջին պահանջքների բովանդակութիւններից՝ կարելի է եզրակացնել, որ նոր դարասկզբում Ջաւախքի քաղաքական միտքը գնալով հասունացել է. վերջին պահանջքները գնալով համապատասխանում են Ջաւախքի իրական շահերին, պատմական արդարութեանը եւ դիւանագիտական տրամաբանութեանը: Ջաւախքի շուրջ ընթացող ներկայ զարգացումներում՝ հայեցակարգային բնոյթ կրող նմանատիպ յայտարարութիւններն ու Վրաստանի, ինչպէս նաեւ միջազգային կառոյցների առջեւ դրուող պահանջքները արդէն յաճախակի են դառնում, որը խօսում է տարածաշրջանում ընթացող եւ խմորուող գործընթացների մշտական առկայութեան մասին:

ՀԵՌԱՆԿԱՐՆԵՐ

Ելնելով վերոնշեալ պատմական ակնարկից՝ ամփոփենք Ջաւախքի յետխորհրդային վարչատարածքային կառուցուածքի առանձնայատկութիւնները եւ այս հիմքի վրայ ուրուագծել վերջինիս ներկայ եւ ապագայ քաղաքական խորապատկերը: Այս բոլորի համադրումը մեզ հնարաւորութիւն կարող է ընձեռել՝ ներկայացնելու իրական եւ Ջաւախքի զարգացման երաշխիք հանդիսացող տեսլականը, միմիայն որի միջոցով հնարաւոր կը լինի սկզբնաւորելու պատմական արդարութեան վերականգնումը:

- Ջաւախք տարածաշրջանը յետխորհրդային ժամանակում (1994) ապրեց իր հերթական մասնատումը: Նրանից խլուեց Ծալկայի հատուածը՝ բացասաբար ազդելով տարածաշրջանի՝ որպէս մէկ միասնական վարչաքաղաքական միաւոր ձեւաւորուելու գործընթացի վրայ.
- ԽՍՀՄ փլուզումից իվեր Ջաւախքի հայութիւնը, չունենալով տարաբնոյթ խնդիրների, այդ թւում՝ տարածաշրջանի վարչատարածքային կարգավիճակի վերաբերեալ հայեցակարգային մօտեցումներ՝ երկար ժամանակ գտնւում էր հակասութիւնների եւ քաղաքական խարխափումների լաբիւրինթոսում: Սա յանգեցրել է նրան, որ Ջաւախքում մինչ օրս 20ամեայ զարթօնքի (1988-2008) ժամանակահատուածում չի լուծուել գրեթէ ոչ մի խնդիր.
- 21րդ դարասկզբին Ջաւախքում քաղաքական միտքը սկսել է ապրել իր դրական առաջընթացը: Այն արտացոլւում է տարածաշրջանի

խնդիրների շուրջ տարբեր հրապարակումներում, յայտարարութիւններում, բանաձեւումներում եւ պահանջքներում տարբեր հասարակական-քաղաքական կազմակերպութիւնների՝ հայեցակարգայինին եւ քաղաքական տրամաբանութեանը մօտ մտքերի արծարծումը.

ՎՐԱՍՏԱՆԻ ՆԱՀԱՆԳԱՅԻՆ ԲԱԺԱՆՄԱՆ ՈՐՈՇ ՀԵՏԵՒԱՆՔՆԵՐԸ ՋԱՒԱԽՔԻ ՎՐԱՅ

Ջաւախքի ժողովուրդը սեփական տարածաշրջանի վարչատարածքային բաժանման վերաբերեալ ունեցել է հակասական տեսակէտներ: Մէջբերուած տողերը մի կողմից հանդէս են գալիս Ախալցխան որպէս տարածաշրջանային կենտրոն դարձնելուն, միւս կողմից՝ հադիպում ենք երկարատեւ պայքարի մի ողջ ընթացքի, որի նպատակն է եղել ազատուել Ախալցխայի «լծից» եւ որպէս կենտրոն հռչակել Ախալքալաքը: Տուեալ դէպքում Ջաւախքը սահմանափակւում էր Ախալքալաքի, Նինոծմինդայի, մասամբ նաեւ՝ Ասպինձայի շրջաններով: Իրաւամբ՝ քաղաքական մտքի տհասութիւնը երբեմն կարող է յանգեցնել սեփական հայրենիքի մասնատմանն ու վերջինիս կորստեանը, ինչը տեղի ունեցաւ Ջաւախքի պարագայում: Քաղաքական «գործիչ»ների անհեռատես գործելակերպը վրացական կողմին լիարժէք հնարաւորութիւն ընձեռեց այս ընթացքում «մարսելու»՝ դեռ խորհրդային վերջին տարիներին «կուլ տուած» Ախալցխայի գաւառը (Սամցխէն), որտեղ վրացական գործօնի յետագայ ամրապնդման համար Վրաստանն օգտագործեց ե՛ւ եկեղեցական, ե՛ւ աշխարհիկ իշխանութիւնների գրեթէ բոլոր հնարաւորութիւնները եւ լծակները: Քաղաքական Ջաւախքը դիտարկելով միմիայն 2-3 շրջաններում եւ Ախալցխայի ու Ծալկայի հատուածները «յիշելով» խիստ հազուադէպօրէն՝ Ջաւախքի քաղաքական ներկայացուցիչները տարածաշրջանի ռազմագիտական նշանակութիւնը հասցրել են զրոյական մակարդակի, որն էլ իր հերթին բերել է ամբողջ տարածաշրջանի՝ բոլոր իմաստներով դերի նուազեցմանը:

1994ին Ջաւախքի տարածքը վերածուելով «Սամցխէ-Ջաւախեթի» նահանգի եւ որպէս նահանգային կենտրոն դիտարկելով Ախալցխան, վրացական իշխանութիւնները լուծարեցին մնացած բոլոր շրջաններում նախկինում գոյութիւն ունեցած վարչական հաստատութիւնները՝ կենտրոնացնելով վերջիններս Ախալցխայում: Տուեալ ժամանակահատուածում արդէն վրացական շունչ ստացած Ախալցխան Ջաւախքի միւս հատուածների համար դիտւում էր որպէս մի օտար եւ մեծ հեռաւորութեան վրայ գտնուող քաղաք, որտեղ հայութիւնն իրեն զգում է «անյարմար կացութեան» մէջ: Տուեալ պայմաններում, օրինակ, կենցաղային կամ այլ փաստաթղթի համար Ախալքալաքի հեռու գիւղերից բնակչութեան՝ մինչ Ախալցխա հաս-

նելը տեղիք էր տալիս լուրջ դժգոհութիւնների, ինչին արձագանգելով էլ քաղաքական գործիչները ծաւալել էին վերոյիշեալ պայքարը:

Կենցաղայինից հեռուն չգնացող մտածելակերպի առկայութիւնը շատ յաճախ կարող է յանգեցնել ողբերգական հետեւանքներով պարտութիւնների...: Այդկերպ պատահեց նաեւ Ջաւախքի պարագայում: Իբր արձագանգելով բնակչութեան տրտունջներին՝ Ջաւախքի քաղաքագէտները, անգիտակցաբար պայքար ծաւալելով Ախալցխայի դէմ՝ ուղղակի եւ անուղղակի նպաստեցին վերջինիս վրացականացմանն ու օտարմանը Ջաւախքի կազմից: Սա մի ողջ դրամա էր՝ տեղի ունեցած Հայաստանի Հանրապետութեան եւ համայն հայութեան աչքի առաջ, որի հետեւանքները դեռ երկար են իրենց զգացնել տալու:

Առաջին հայեացքից կարող է իրատեսական թուալ. ինչու՞ յանկարծ ամէն հաստատութիւն տանել Ախալցխա, երբ այդ ամէնը կար Ախալքալաքում կամ միւս նախկին շրջկենտրոններում: Իրօք, բնակչութեան դժգոհութիւններն արդարացի էին, այս հիմքի վրայ իրենց գործն արդարացի էին համարում նաեւ տուեալ շրջանի գործիչները, քանի որ արձագանգում էին բնակչութեան բողոքի ձայնին: Սակայն ինչպէ՞ս:

Հարցը պարունակում էր բազմապիսի նրբութիւններ, որոնց, սակայն, բոլորովին չէին տիրապետում Ջաւախքի քաղաքական ներկայացուցիչները: Իրականում Ջաւախքի քաղաքական, ռազմագիտական եւ մշակութային կենտրոնը մշտապէս պէտք է հանդիսանար Ախալցխան, որը հանդիսանալու էր Ջաւախքի ինքնուրոյն զարգացման խորհրդանիշը կամ «մայրաքաղաքը»: Առանց վերջինիս հայեցի գոյութեան անհնար է Ջաւախքի իրական զարգացումը: Վրաստանի ղեկավարութիւնը մշտապէս գիտակցելով այս ամէնը՝ վրացականացման է ենթարկել Ախալցխայի հատուածը: Իսկ այս պայմաններում այն դարձնելով Ջաւախքի վարչական կենտրոն՝ բնականաբար վերջինս լուծում էր միանգամից միքանի խնդիր.

- Վրացական միջավայր էր տեղափոխում Ջաւախքի վարչական-կառավարչական մարմինները, որոնց միջոցով Ջաւախքի՝ սեփական մեթոդներով եւ օրէնքներով ղեկավարումն անհամեմատ հեշտացում էր.
- Լիովին ապահովում էր տուեալ վարչական ղեկավար մարմիններում ազգութեամբ վրացի պաշտօնեաների ներկայութիւնը: Այդ գործընթացը արագ տարածուեց նաեւ կառավարչական ստորին օղակներում, եւ հայութիւնն իսպառ զրկուեց Ջաւախքի՝ սեփական երկրի ճակատագրի տնօրինման հնարաւորութիւնից.
- Վրացականացուած Ախալցխայի նոյնքան վրացականացուած վարչական մարմինները լիարժէք երաշխիք էին՝ Ջաւախքում վերահսկելու ցանկացած գործընթաց եւ բացառելու վրացական կամքից անկախ արուող հայութեան իւրաքանչիւր քայլ:

Վարչական օղակների Ախալցխա տեղափոխումով Վրաստանն իրաւամբ Ջաւախքի կառավարումը պարզապէս խլեց հայերի ձեռքից: Եւ այստեղ ահա, Ջաւախքի քաղաքական գործիչները, ստեղծուած իրավիճակից սարսափահար, պայքար էին ծաւալել՝ վրացականացուող Ախալցխայից «փրկելու» ինչ-ինչ վարչական հաստատութիւններ: Քաղաքական կամքի բացակայութեան պայմաններում Ախալցխան փրկելու փոխարէն «փրկուելու» էին ինչ-ինչ վարչական օղակներ:

Իրականում Ախալցխան, հանդիսանալով ե՛ւ Թիֆլիս-Ալեքսանդրապոլ-Ախալցխա-Շուշի հայոց երբեմնի քաղաքակրթական հզօր քառանկիւնու չորրորդ անկիւնը, ե՛ւ ներկայումս վարչաքաղաքական եւ ռազմագիտական իմաստով խոշոր նշանակութեան կենտրոն, անփոխարինելի նշանակութիւն ունի ինչպէս Ջաւախքի յարատեւ զարգացման, այնպէս էլ ՀՀի՝ դէպի արտաքին աշխարհ անվտանգ ելքի ապահովման գործում: Այս հանգամանքն ինչ-որ տեղ գիտակցել են Ջաւախքի տուեալ ժամանակի գործիչները. այդ է վկայում նման բովանդակութիւն պարունակող գրութիւնների գոյութիւնը, սակայն քաղաքական մթնոլորտում տիրող քաոսը մշուշով էր պատել ամէն ինչ: Ջաւախքի քաղաքական գործիչների վերոնշեալ ջայլամի քաղաքականութիւնը յանգեցրեց նրան, որ այդպէս էլ չձեւաւորուեց Ախալցխան վերահայացնելու, Ջաւախքը ինքնավար ճանապարհով տանելու եւ Ախալցխան տուեալ ինքնավարութեան վարչական կենտրոն (մայրաքաղաք) հռչակելու ուղղութիւնը: Իսկ ինքնուրոյն զարգացող տարածաշրջանի համար վայրկեանների խնդիր էր տարբեր շրջաններում տեղակայել վարչական մարմիններ:

ԵԶՐԱՓԱԿՈՒՄ

Ջաւախքի նահանգային-վարչական կառուցուածքը ներկայումս մօտաւորապէս նոյնն է՝ որոշ կառուցուածքային փոփոխութիւններով: Նահանգային կենտրոն Ախալցխան վրացի պաշտօնեաներով հանդերձ իր ձեռքում է կենտրոնացրել գրեթէ բոլոր վարչական հաստատութիւնները: Ջաւախքի տարբեր մասերից հնչող հայութեան ձայնն այդպէս էլ լսող չկայ այնտեղ:

Ախալցխայում է կենտրոնացուած Վրաստանի հարկային ոլորտը համադրող գերատեսչութեան տարածաշրջանային կենտրոնը. առանձին շրջանների (օրինակ՝ Ախալքալաքի) հարկային տեսչութեան ղեկավարը ընդամէնը հանդիսանում է Ախալցխայի՝ տուեալ հիմնարկի վրացի ղեկավարի տեղակալը: Ախալցխայում են գտնւում Վրաստանի Ներքին Գործերի Նախարարութեան (ՆԳՆ) մի շարք ոլորտները համադրող բաժանմունքի գլխաւոր վարչութիւնները, իսկ առանձին շրջաններ ունեն իրենց վարչութիւնները, որոնք բոլորը ենթակայ են Ախալցխային[41]:

Ինչպէս տեսնում ենք՝ գրեթէ բոլոր ուժային կառոյցները կենտրոնացուած են Ախալցխայում: Հակառակ այս կառուցուածքային օրինաչափութեանը՝ ՆԳՆի ոլորտային մէկ հիմնարկութեան՝ պետանվտանգութեան խոշոր ստորաբաժանումը գտնւում է Ախալքալաք քաղաքում, ինչը ինքնին խօսում է ջաւախահայութեան հանդէպ Վրաստանի իշխանութիւնների մօտ առկայ որոշակի անվստահութեան մասին:

Առանձին վարչական հաստատութիւններ անմիջապէս կապուած են տուեալ ոլորտը համակարգող նախարարութեան հետ եւ իշխանութիւններն այն չեն կենտրոնացնում Ախալցխայի «խողովակով»: Այդպիսի հաստատութիւններից են քաղաքապետարանների (շրջանների) կրթական աղբիւր կենտրոնները (սովետական նախկին շրջանային ժողկրթբաժինները), տեղական ինքնակառավարման մարմինները, անձնագրային ծառայութիւնները եւն.: Իդէպ, վերջին հաստատութիւնը երկար տարիներ եղել է ՆԳՆ համակարգում եւ գտնուել Ախալցխայում: Բնակչութեան դիմում-բողոքների արդիւնքում երկար տարիներ իվեր իբր եղել է որոշում, որ Ախալքալաքում, ի թիւս այլ բաժինների, ստեղծուէր նաեւ անձնագրային բաժին: Սակայն տարիներ շարունակ Ջաւախքի բնակչութիւնը շարունակում էր արտերկիր մեկնելու անձնագիր ստանալ Ախալցխայից, իսկ Ախալքալաքում տրւում էին միայն տեղական անձնագրեր[42]: Իսկ այս կապակցութեամբ Ախալքալաքի ոստիկանութեան անձնագրային բաժնի աշխատակիցները «մշակել էին» «ժողովրդի վիճակը թեթեւացնելուն ուղղուած» մեխանիզմ. վերցնելով քաղաքացուց մօտ 120-150 դոլար (այն դէպքում, երբ անձնագրի պետական արժէքը ընդամէնը 35 վրացական լարի էր (կամ, ատենի փոխարժէքով, մօտ 16 դոլար), վերջիններս անձնագրերն Ախալցխայից շտապ հասցնում էին Ախալքալաք:

Իրավիճակը փոխուեց, երբ Վրաստանում 2003ին վարդերի յեղափոխութիւնից յետոյ տեղի ունեցած կառուցուածքային փոփոխութիւններից յետոյ անձնագրային ծառայութիւնը ՆԳՆից անցաւ Արդարադատութեան Նախարարութեան իրաւասութեան ներքոյ: Այդ ընթացքում անձնագրային ծառայութեան գրասենեակներ, բացի նահանգային կենտրոններից, բացուեցին նաեւ նախկին խորհրդային բոլոր շրջաններում[43]:

Ջաւախք տարածաշրջանը, յետխորհրդային ժամանակահատուածում՝ վարչատարածքային, ինչպէս նաեւ պետական հաստատութիւնների տեղաբաշխման այսպիսի ճակատագրի արժանանալով, այսօր էլ դեռեւս այդ հողի վրայ գտնւում է անորոշ վիճակի մէջ: Հայկական շրջանակներում Ջաւախքի նկատմամբ հայեցակարգի բացակայութիւնը անժամկէտօրէն կարող է երկարացնել այդ անորոշ վիճակը:

ԾԱՆՕԹԱԳՐՈՒԹԻՒՆՆԵՐ

[1] Էդուարդ Շեւարդնաձէն Մոսկուայից Վրաստան վերադարձաւ 1992 Մարտին եւ նշանակուեց երկրի ժամանակաւոր ղեկավար մարմնի՝ պետական խորհրդի նախագահ, իսկ Նոյեմբերի 4ին ստանձնեց Վրաստանի Խորհրդարանի նախագահի պաշտօնը: Շուտով Խորհրդարանի կողմից ստեղծուեց նոր՝ երկրի ղեկավարի պաշտօնը, եւ նա 1992 Նոյեմբերի 6ից մինչեւ 1995 Նոյեմբերը, մինչ նախագահի պաշտօնի վերականգնումն ու նոր նախագահական ընտրութիւններում յաղթանակ տանելը (Նոյեմբերի 5), ստանձնեց երկրի ղեկավարի պաշտօնը:

[2] Վահէ Սարգսեան, «Վրաստանի Վարչատարածքային Բաժանման Պատմութիւնից», *Ջաւախքը 1988–2008 թթ. (Յօդուածների ժողովածու)*, Երեւան, «Միտք» վերլուծական կենտրոն, 2009, էջ՝ 153-9:

[3] «Կոչ՝ Ուղղուած Ջաւախքցիներին», *Ջաւախք*, թիւ 1 (38), Փետրուար 1997:

[4] «Ջաւախքը Ցանկանում է Նոր Կարգավիճակ Ստանալ», *Ազգ*, 2 Օգոստոս 1995:

[5] Դա պարզ երեւում է նրանց ծրագրերի մէջ, երբ Ջաւախքը մէկ նոյնացնում է Ախալքալաքի, Բոգդանովկայի, որոշ դէպքերում նաեւ Ասպինձայի շրջանների հետ, իսկ շատ անգամ դրանց «աւելանում են» նաեւ Ախալցխան, Ադիգէնը, շատ անգամ՝ նաեւ Ծալկան («Ջաւախք» ժողովրդական շարժում կազմակերպութեան խորհրդի՝ «Գաղափարական-քաղաքական արտաքին յարաբերութիւնների» յանձնախմբի ծրագրային դրոյթներ՝ հաստատուած ՋԺՇի նախագահութեան նիստի կողմից, 13-14 Յուլիսի, 1994, ք. Ախալքալաք):

[6] «Վրաստանի Մարդու Իրաւունքների եւ Ազգամիջեան Յարաբերութիւնների Կոմիտէի Արտագնայ Նիստը Ախալքալաքում», *Վրաստան*, 19 Օգոստոս 1995: Աւելացնենք նաեւ, որ 1995 Յուլիսին ՋԺՇն դիմեց վերոնշեալ կազմակերպութիւններին՝ վերջիններիս կոչ անելով համախմբուել եւ ստեղծել մէկ ընդհանուր կենտրոնացուած ղեկավար օրգան (համադրող խորհուրդ): Համադրող խորհուրդը կեանքի կոչուեց 1995 Յուլիս ամսին: Ղեկավար այս մարմինը միաւորում էր քաղաքական աշխատանքի բաւարար փորձ ունեցող, շրջանում լայն հեղինակութիւն վայելող 21 գործիչների: Համադրող խորհրդի նախագահ ընտրուեց Իսահակ Աբրահամեանը, տեղակալներ՝ Եուրի Թառլամազեանը, Սամուէլ Պետրոսեանը, քարտուղար՝ Մկրտիչ Խաչատրեանը («Համադրող Խորհուրդը Օրուայ Հրամայականն է», *Ջաւախք*, Յուլիս 1995, N 6 (12). նաեւ՝ «Ստեղծուեց Համադրող Խորհուրդ», *Ջաւախք*, Յուլիս, 1995, N 7 (13): Այդուհետեւ շատ դիմումներ, որոշումներ եւ այլ փաստաթղթեր ընդունում էին հենց այս խորհրդի կողմից:

[7] "Листок опроса, общественного мнения о статусе Джавахетского региона для внесения в проектновой Конституции Республики Грузия" (Հարցաթերթիկ, Ջաւախքի տարածաշրջանի կարգավիճակի մասին հանրային կարծիքը Վրաստանի Հանրապետութեան նոր սահմանադրութեան նախագծի մէջ ներառելու համար), հմմտ.՝ «Անց է Կացում Հանրային Հարցում», *Ջաւախք*, Յուլիս 1995, N 7 (13):

[8] «Որքանո՞վ է Վրաստանի Նոր Սահմանադրութիւնը Բաւարարում Ջաւախքահայութեանը», *Ազգ*, 29 Օգոստոս 1995. նաեւ՝ «Ճանապարհ Դէպի Ջաւախք», *Ազգ*, 2 Սեպտեմբեր 1995:

[9] Ախալցխան Ախալքալաքից հեռու է մօտ 70 կմ խիստ դժուարանցանելի, քայքայուած ճանապարհով, չհաշուած Ախալքալաքի հեռու-հեռատր գիւղերը եւն. («Ջաւախքին Վերաբերող Հարցը Ջաւախքցուն Օտար Չէ», *Ջաւախք, Պաշտօնաթերթ «Ջաւախք» Ժողովրդական Շարժման*, N 1(7), Փետրուար 1995):

[10] Նոյն:

[11] «Ժողովուրդն Իրաւունքի Ոտնահարում Թոյլ Չի Տայ», *Ազատամարտ*, թիւ 43, Սեպտեմբեր 1994: Հմմտ.՝ «Դիմում Վրաստանի Պետութեան Ղեկավար Պ-ն Էդ. Ա. Շեւարդնաձէին», *Ջաւախք*, Սեպտեմբեր 1994, N 2(4): Լրացուցիչ նշենք, որ ՋԺՇի ներկայացուցիչների, Համադրող Խորհրդի, շրջանային վարչական այլ աշխատակիցների կողմից Շեւարդնաձէին եւ երկրի խորհրդարանին են ներկայացուել բազմապիսի եւ բազմաբնոյթ այնպիսի նամակներ, խնդրագրեր ու պահանջագրեր, որտեղ դարձեալ ու դարձեալ «ոչ» էր աստմ պետութեան ղեկավարի՝ նահանգային կառուցուածքի վերաբերեալ այսպիսի նախաձեռնութեանը: Ջաւախքում բազմաթիւ գործիչների հաւաքներում նոյնպէս մշտապէս օրակարգի հրատապ կէտ է եղել պետութեան ղեկավարի թիւ 237 հրամանագիրը: Միաժամանակ, Ջաւախքի քաղաքական գործիչների կողմից ժամանակ առ ժամանակ հրապարակում էին յօդուածներ, որտեղ մանրամասն ներկայացում էին Ջաւախքին ինքնավարութիւն տալու հարցի կարեւորութիւնը: Այս ամէնի մասին կարելի է տեսնել տեղական մամուլում («Դիմում Վրաստանի Պետութեան Ղեկավար Պ-ն Էդ. Ա. Շեւարդնաձէին». «Համարեցին Անընդունելի», *Ջաւախք*, Սեպտեմբեր 1994, N 2 (4). «Ջաւախքը՝ Սարդոստայնում, *Ջաւախք*, Հոկտեմբեր 1994, N 3 (5). «Համատեղ Խորհրդակցութիւն», *Ջաւախք*, Նոյեմբեր 1994, N 4 (6). «'Ինքնավարութիւն' Իմաստի Իրաւաքաղաքական Բովանդակութեան եւ Ձեւերի Մասին», *Ջաւախք*, Յունիս 1995, N 6 (12). «Ջաւախքի Տարածաշրջանի Սահմանադրական Ստատուսի Նախագիծը», *Ջաւախք*, Յուլիս 1995, N 7 (13). «Ինքնավարութիւնը Ժողովրդավարութեան Հրամայականն է», *Ջաւախք*, Օգոստոս, 1995, N 8 (14). «ՋՀՔԿԿԽ-ի Դիմումը Վրաստանի Պետութեան Ղեկավար Պր-ն Է. Ա. Շեւարդնաձէին», *Ջաւախք*, Սեպտեմբեր 1995, N 9 (15). «'Ջաւախք' ԺՇ-ի Խորհրդի Նիստը» եւ «Կրքեր Բորբոքուեցին, Եւ Դա Անցողիկ Չէ (Շրջանի Ակտիւ Ժողովը)», *Ջաւախք, Ախալքալաքի Շրջանի «Արշալոյս» Կրթամշակութային եւ Բարեգործական Կազմակերպութեան Պաշտօնաթերթ*, Օգոստոս 1994, N 1:

[12] Обращение – Координационного совета общественно-политических организации Джавахка: президенту Грузии г-ну Э. А. Шеварднадзе, председателю парламента г-ну З.Жвания, г. Ахалкалаки (Ջաւախքի Հասարակական-Քաղաքական Կազմակերպութիւնների Համադրող Խորհրդի դիմումը Վրաստանի նախագահ պ-ն Է. Ա. Շեւարդնաձէին, խորհրդարանի նախագահ պ-ն Զ. Ժվանիային, ք. Ախալքալաք):

[13] Նոյն:

[14] *Ջաւախք*, թիւ 1 (18), Փետրուար 1997. հմմտ.՝ նոյն, թիւ 1, Օգոստոս, 1998:

[15] Кординационный Совет общественно-политических организации Джавахка, Обращение – парламентским делегациям Армении и Грузии, 7 апреля, 1997г., г. Ахалкалаки (Ջաւախքի Հասարակական-Քաղաքական Կազմակերպութիւնների

Համադրող Խորհուրդ, դիմում Վրաստանի եւ Հայաստանի խորհրդարանական պատուիրակութիւններին, 7 Ապրիլի, 1997, ք. Ախալքալաք):

[16] Նոյն:

[17] *Ջաւախք*, թիւ 1 (18), Փետրուար 1997:

[18] Նոյն:

[19] Координационний Совет общественно-политических организаций и движении Джавахети, Открытое письмо – председателю Ахалкалакского районного правления господину Дарбиняну С.Т., 12 марта, 1997г., г. Ахалкалаки. (Ջաւախքի Հասարակական-Քաղաքական Կազմակերպութիւնների եւ Շարժումների Համադրող Խորհուրդ, Բաց նամակ Ախալքալաքի Շրջանի վարչութեան ղեկավար պ-ն Ս. Տ. Դարբինեանին, 12 Մարտի, 1997, ք. Ախալքալաք):

[20] *Ջաւախք*, թիւ 1 (18), Փետրուար 1997:

[21] Նոյն:

[22] Փաստաթուղթ. «Ջաւախքի Հասարակական-Քաղաքական Կազմակերպութիւնների Համադրող Խորհուրդ, Ջաւախքի Հիմնահարցի Լուծման Մարտավարութիւն (նախագիծ), 25.04.1997 թ., ք. Ախալքալաք»:

[23] Նոյն:

[24] Նոյն:

[25] *Ջաւախք*, թիւ 1 (18), Փետրուար 1997:

[26] «Հայն Ու Վրացին Պիտի Ամրապնդեն Դարերից Եկող Բարեկամութիւնը (Հարցազրոյց «Ջաւախք» Ժողովրդական Շարժման Ղեկավար Ստեփան Յակոբեանի Հետ)», *Հայաստանի Հանրապետութիւն*, 4 Փետրուար 1999:

[27] «Ջաւախքի Ինքնավար Հանրապետութեան Ապագայ Սահմանադրութեան Հիմնադրոյթները», *Ջաւախք*, թիւ 2 (20), Օգոստոս 1998:

[28] Грузия, Самцхе-Джавахетия и "тюркское кольцо" вокруг Армении (Վրաստան, Սամցխէ-Ջաւախքը եւ «Թիւրքական Օղակը» Հայաստանի շուրջ), https://regnum.ru/news/202173.html :

[29] Обращение – Координационного совета общественно:

[30] Փաստաթուղթ. «Ջաւախքի Հասարակական-Քաղաքական»:

[31] *Ջաւախք*, թիւ 1 (18), Փետրուար 1997:

[32] Грузия, Самцхе-Джавахетия:

[33] «Կոչ՝ Ուղղուած Ջաւախքցիներին», *Ջաւախք*, թիւ 1 (19), Օգոստոս 1998:

[34] *Ջաւախք*, թիւ 2 (20), Օգոստոս 1998:

[35] Նոյն:

[36] «Ջաւախքի Ինքնավար Հանրապետութեան Ապագայ Սահմանադրութեան Հիմնադրոյթները», *Ջաւախք*, թիւ 2, (20), Օգոստոս 1998:

[37] Առաջին համաժողովը (11 Դեկտեմբեր 2004) նուիրուած էր խնդրոյ առարկայ տարածաշրջանի սոցիալ-տնտեսական խնդիրներին, երկրորդը (2 Ապրիլ 2005)՝ կրթամշակութային խնդիրներին եւ երրորդը (24 Սեպտեմբեր 2005)՝ Վրաստանի պետական կառուցուածքում Ջաւախքի կարգավիճակի խնդրին:

[38] Վրաստանի սահմանադրութեան նշեալ յօդուածի առաջին ենթակէտի պարունակութիւնը հետեւեալն է. «Յօդուած 3. 1. Վրաստանի բարձրագոյն պետական

մարմինների բացառիկ իրաւասութեանը վերաբերում են. Ա) Վրաստանի քաղաքացիութեան օրէնքը, մարդու իրաւունքների եւ ազատութեան մասին, արտագաղթի եւ ներգաղթի, ելքի եւ մուտքի, այլ երկրի կամ քաղաքացիութիւն չունեցող անձանց ժամանակաւոր կամ մշտական կացութիւնը Վրաստանում, Բ) Վրաստանի կարգավիճակի որոշումը, պետական սահմանի կարգն ու պահպանութիւնը, սահմանային ջրերի կարգավիճակն ու պահպանութիւնը, օդային տարածքը, մայրցամաքային շելֆը եւ յատուկ տնտեսական գօտին, Գ) պետութեան պաշտպանութիւնը եւ անվտանգութիւնը, զինուած ուժերը, ռազմական արդիւնաբերութիւնը եւ զէնքի վաճառքը, Դ) պատերազմի եւ խաղաղութեան հարցերը, արտակարգ եւ ռազմական իրաւական դրութեան ռեժիմի հաստատումը եւ դրանց կիրառումը, Ե) ներքին քաղաքականութիւնը եւ միջազգային յարաբերութիւնները, Զ) արտաքին առեւտուրը, մաքսային եւ սակագնային ռեժիմը, Է) պետական բիւջէն եւ պետական պարտքերը, մետաղադրամների հատումը, բանկային, վարկային, ապահովագրական եւ հարկային օրէնսդրութիւնը, Ը) էտալոններն ու նորմաները, երկրաբաշխութիւնն ու քարտէզագրութիւնը, ճիշտ ժամանակի կարգաւորումը, պետական վիճակագրութիւնները, Թ) միացեալ էներգիայի համակարգը եւ դրա ռեժիմը, կապը, առեւտրային նաւատորմը, նաւերի դրօշները, համապետական նաւահանգիստների նշանակութիւնը, օդանաւակայանները եւ օդակայանները, օդային տարածքի, տարանցիկութեան եւ օդային փոխադրամիջոցի վերահսկումը, օդային փոխադրամիջոցի գրանցումը, օդերեւութաբանական ծառայութիւնը, շրջակայ միջավայրի իրավիճակի վերահսկողութեան համակարգը, Ժ) համապետական նշանակութեան երկաթգծերն ու աւտոճանապարհները, Ի) ճկնորսութիւնը ովկիանոսում եւ բաց ծովում, Լ) սահմանամերձ–սանիտարական պահպանաջոկատները, Խ) դեղորայքի օրէնսդրութիւնը, Ծ) բարձրագոյն ուսումնական հաստատութիւնների որակաւորումն ու հաւատարմագրումը, ակադեմիական, գիտական, մասնագիտական կոչումների եւ դասային աստիճանների շնորհման օրէնսդրութիւնը, Կ) մտաւոր սեփականութեան օրէնսդրութիւնը, Հ) առեւտրային, քրէական, քաղաքացիական, վարչական, աշխատանքային իրաւունքի օրէնսդրութիւնը, պատժի կիրառման օրէնսդրութիւնը եւ դատավարական օրէնսդրութիւնը, Ձ) քրէական ոստիկանութիւնն ու հետաքննութիւնը, Ղ) հողի, ստորերկրեայ եւ բնական պաշարների օրէնսդրութիւնը» (Վրաստանի սահմանադրութիւն (յատուկ թողարկում), Թբիլիսի, 2005 (վրացերէն):

[39] Վահէ Սարգսեան, *Սամցխէ-Ջաւախք-Թռեղքը Հայ-Վրացական Յարաբերութիւնների Հոլովոյթում (1980-ական թթ. Վերջ-1990-ական թթ.)*, Երեւան, ՀՀ ԳԱԱ Պատմութեան Ինստիտուտ, 2006, էջ՝ 354-5:

[40] http://www.panorama.am/am/society/2008/08/20/javaxq/?sw:

[41] Տե՛ս՝ Վրաստանի ՆԳՆ պաշտօնական կայքէջի (http://police.ge/) համապատասխան բաժինները:

[42] «Ոտնահարում են Ջաւախքցիների Իրաւունքները: Ինչպէս են Ջաւախքում Անձնագիր Ստանում», *Երկիր*, 2 Սեպտեմբեր 1998:

[43] Հետաքրքրական է, որ 2005 Մարտին Ախալքալաքի անձնագրային վարչութեան բացումը, Ջաւախքի քաղաքական ուժերից՝ «Միասնական Ջաւախք» ժո-

ղովրդավարական դաշինքը (հիմնուած 2005) համարում է իր՝ այդ ուղղութեամբ մղած պայքարի արդիւնք (Վ. Սարգսեան, «Շարժումների, Միութիւնների եւ Հասարակական Կազմակերպութիւնների Դերը Սամցխէ-Ջաւախք-Ծալկա Տարածաշրջանի 20-Ամեայ (1988–2008 թթ.) Քաղաքական Կեանքում», *Ջաւախքը 1988-2008 թթ. (Յօդուածների ժողովածու)*, Երեւան, «Միտք» Վերլուծական Կենտրոն, 2009, էջ 240:

DJAVAKHK AND POST-SOVIET GEORGIAN ADMINISTRATIVE-TERRITORIAL DIVISIONS (Summary)

VAHE SARKSIAN
javakhk1913@gmail.com

Like many post-Soviet states, post-Soviet Georgia redrew its administrative territorial regions. The state was divided into 11 districts. The Armenian-populated southern areas were basically incorporated into the newly created Samtskhe-Djavakhk district. However, the district did not include the mostly Armenian-populated Dzalka region (the Treghk kavar of the Gugark state of Historical Medz Hayk). The latter was incorporated into the mostly Azeri-populated Kvemo Kartli District.

The Djavakhk Armenians rejected the Georgian leader Edward Shevardnadze's July 31, 1994 decree 237, whereby the Samtskhe-Djavakhk district was established. They opposed the Georgian leadership and criticized the decision to incorporate parts of Djavakhk (Akhalkalak and Ninodzminta [aka Bogdanovka] under another district (Akhalkalak and surrounding areas). However, the Djavakhk Armenian activists and civil society groups did not produce any unified administrative-territorial counter suggestion, neither did they produce any unified theoretical framework. A similar chaotic situation existed when there were demands and suggestions for autonomy concerning the Djavakhk area. Eventually no positive steps were taken in the educational-cultural and socio-economic spheres, nor for the administrative-territorial aspect and the granting of autonomy to Djavakhk within the Georgian state.